

*Ֆինանսական համակարգի հաշտարարի կողմից ձևավորած 2009 թվականի երկրորդ եռամսյակի, այդ թվում՝ հունիս ամսվա նախադեպի ամփոփում*

---

Ֆինանսական համակարգի հաշտարարը՝ համաձայն «Ֆինանսական համակարգի հաշտարարի մասին» ՀՀ օրենքի, իր մասնագիտական գործունեությունը սկսել է ծավալել 2009 թվականի հունվարի 24-ից: Ստորև ամփոփված է Հաշտարարի կողմից ձևավորած 2009 թվականի երկրորդ եռամսյակի նախադեպը:

Հաշտարարի գրասենյակն իր գործունեության երկրորդ եռամսյակում ստացել է ֆինանսական կազմակերպություններին վերաբերող ընդհանուր քանակությամբ 80 բողոք: Ֆինանսական կազմակերպություններին չվերաբերող Գրասենյակի ստացած քաղաքացիների զանգերն ու այցելությունները բազմաթիվ են: Ֆինանսական կազմակերպություններին վերաբերող ութսուն բողոքներից քառասունինը, համաձայն օրենքի, ենթակա չեն քննության Հաշտարարի կողմից (հաճախորդների մի մասը իրավաբանական անձինք են, մյուսների բողոքները կապված են մինչ Հաշտարարի մասին օրենքն ուժի մեջ մտնելը տեղի ունեցած իրադարձությունների հետ, որոշ պահանջների վերաբերյալ արդեն իսկ առկա է դատարանի որոշում, կամ գործը գտնվում է դատարանի վարույթում, մնացած դեպքերում բողոքները կրում են ընդհանուր բնույթ և ըստ էության չեն պարունակում գույքային պահանջ):

Հաշտարարի քննությանը ենթակա 30 բողոքներից 9 երկրորդ եռամսյակում ստացվել են գրավոր տեսքով, որոնցից 8-ն ընդունվել են քննության: Քննության ընդունված 8 պահանջներից 2-ի վերաբերյալ կայացվել է պահանջը մերժելու վերաբերյալ որոշում, 2 պահանջները բավարարվել են՝ Հաշտարարի միջամտությամբ հաճախորդին և կազմակերպությանը հաշտեցնելու միջոցով, իսկ մնացած չորս պահանջները դեռևս գտնվում են քննության գործընթացում:

Հաշտարարի քննությանը ենթակա 30 բողոքներից տասնինը գրավոր չեն ներկայացվել Հաշտարարի քննությանը: Նշված տասնինը բողոքները ներկայացրած հաճախորդներից 2-ը բանավոր դիմել են Հաշտարարի գրասենյակ, որոնց Գրասենյակի աշխատակիցները պարզաբանել են իրենց իրավունքներն ու պարտականությունները, ինչպես նաև օգնել են շարադրել կազմակերպությանն ուղղված բողոք-պահանջները: Այդ բողոք-պահանջներում նշվել է, որ հաճախորդը պատրաստվում է դիմել Հաշտարարի գրասենյակ: Մրա արդյունքում նշված 2 բողոքները բավարարվել են կազմակերպությունների կողմից՝ առանց Հաշտարարի միջամտության: Վերոնշյալ տասնյոթ բողոքներից երկուսն արդեն իսկ ընդունվել են քննության Հաշտարարի կողմից հուլիս ամսվա ընթացքում, մնացած 15 պահանջների քննությունը Հաշտարարի լիազորությունների շրջանակում են, սակայն հաճախորդները նախապես սահմանված կարգով իրենց բողոք-պահանջները չեն ներկայացրել ֆինանսական կազմակերպությանը: Գրասենյակի աշխատակիցներն օգնել են վերջիններիս ձևակերպել իրենց պահանջները և ներկայացնել ֆինանսական կազմակերպությանը:

<b>2009թ.-ի երկրորդ եռամսյակում ներկայացրած ընդհանուր բողոքների քանակը</b>		<b>80</b>
<b>1. Ենթակա են քննության հաշտարարի կողմից</b>		<b>30</b>
1.1. Ենթակա են քննության հաշտարարի կողմից, սակայն հաճախորդը նախապես չի դիմել ֆինանսական կազմակերպությանը		19
1.2. Բավարարվել են կազմակերպության կողմից՝ հաճախորդի ներկայացրած բողոք-պահանջի հիման վրա		2
1.3. Պահանջի քննությունը մերժվել է՝ ժամկետների հետ կապված		1
<b>1.4. Ընդունվել են քննության՝ գրավոր պահանջի ներկայացմամբ</b>		<b>8</b>
1.4.1 Կապված են վճարահաշվարկային գործարքների (բանկոմատով կատարվող քարտային գործարքների և հաշվի սպասարկման) հետ		1
1.4.2 Կապված են ժամկետային ավանդների հետ		2
1.4.3 Կապված են գրավատան կողմից գրավի առարկայի իրացման հետ		3
1.4.4 Կապված են վարկային գործարքների հետ		2

<b>8 պահանջների գծով որոշումների բնույթը՝</b>		
1. Պահանջ մերժվել է		2
2. Պահանջի քննությունը դադարեցվել՝ Հաշտարարի միջամտությամբ հաճախորդի և կազմակերպության միջև ձեռքբերած համաձայնության հետևանքով		2
3. Պահանջի քննությունը շարունակվում է		4